(Césaire) reprit encore[16]: «Prêcha-t-il aussi à Judas et lui accorda-t-il de pouvoir se repentir afin de monter avec lui?» Je ne le pense pas, ai-je dit, car une nouvelle prédication était inutile à celui qui connaissait tout. En effet, si à ceux que nous amenons au baptême ⌜nous posons des interrogations doctrinales, exigeant d'abord qu'ils renoncent à l'erreur, puis qu'ils confessent la vraie foi[17], Judas, (lui), ⌜non seulement avait déjà renoncé (à l'erreur) et s'était engagé à confesser la foi[18], mais il avait prêché aussi à de nombreuses personnes, sous l'influence de la grâce de Dieu, opérant des guérisons et expulsant les démons[19]. C'est après cela que ce malheureux, de son propre gré, se détourna de la vérité, et que, réprimandé par le Seigneur — «Toi, tu vas me livrer[20]» —, lui ne fut pas pris de confusion et n'eut pas honte ensuite de se faire laver les pieds avec les onze: ⌜spectateur et bénéficiaire de cet extraordinaire geste d'humilité[21], même alors (Judas) demeura endurci dans le mal. Et que personne ne me dise (qu'il commit) ce crime involontairement; mais je ne pense pas qu'il y ait quelqu'un parmi les chrétiens, voire même parmi les incroyants, pour dire cela. Bien plus, Judas lui-même prouve que nul autre (ne fut) cause de son crime. Se condamnant, lui seul, il prononça rapidement contre lui-même la sentence de pendaison, sa volonté le poussant à ce geste de malheur. Il n'avait pas assez du meurtre de son Seigneur; il se livrait encore lui-même, avide d'assouvir son appétit de mensonge. Non qu'il voulût expier le meurtre par le meurtre, lui qui savait parfaitement que celui qui se suicide encourt un châtiment, mais ce pervers, poussant à l'extrême le mépris que lui portaient les hommes, ne pouvait plus se supporter comme traître; c'est pour cette raison qu' *il se pendit*[22]. Il savait que s'il avait persévéré dans la supplication et le repentir, il aurait amené Dieu à lui pardonner. ⌜Mais, ballotté, comme une mer, par l'irrésolution et le doute, il tarda à gagner le havre du repentir[23]; tandis que Paul, le meurtrier d'Étienne[24], ne se laissant pas dominer par ces (sentiments) connut une merveilleuse miséricorde, et que Pierre, grâce à ses larmes[25], obtint aussitôt le pardon.

[12] Cf. *1P* 3, 19-20.
[13] La fin du paragraphe est différente du texte grec.
[14] Cf. *Rm* 3, 26.28.30; 5, 1, etc...

175

Ի պատասխանւոյն Սևերի որ առ Ամոնն գրեաց:

Ոչ ամենեցուն կալանաւորացն, այլ միայն որոց ծանեան զնա և հաւատացին քաւութիւն շնորհեաց. և ծանեան զնա որք բարեգործութեամբ ի ժամանակս կենաց զանձինս ի չարէ մաքրեցին. և զի ամենեքեան թէպէտ և արդարութեամբ քաղաքավարեցին զկեանս, ի սանդարամետս ընդ կապանաւք մահու դնէին նախ քան զգալուստն Քրիստոսի և մնային նորա փրկագործ գալըստեանն, արգելեալք ի ճանապարհէ դրախտին վասն յանցանացն Ադամայ:

Ցայտ առնէ զայս մեզ և Գրիգորիոս աստուածաբանն թէ ոչ աւգտեցան ամենեքեան յիջանելոյն ի դժոխս, արժանապէս ի ճառ պասեքին՝ բացայայտեալ զՔրիստոսի հետևումն ի դժոխսն. և յառաջ բերէ զճշմարիտ զաւրութիւն խորհրդոյն այսպիսի բանիւ. եթէ ի դժոխս իջանիցէ ընդ նմա էջ, ծանիր և անդ զՔրիստոսի խորհուրդն, զի՞նչ է տնտեսութիւն կրկին իջմանն, զի՞նչ է բանն, յայտնապէս կեցուցանէ զամենեսեան երևեալ ի չարութենէն զհաւատացեալսն: Իսկ Իգնատիոս աստուածազգեացն ասաց այսպէս. զիա՞րդ կարասցուք մեք կալ առանց նորա, որում և մարգարէքն աշակերտէին հոգւով որպէս վարդապէտ զնա գիտելով. վասն այսորիկ և որում հաստատութեամբ մնային, եկեալ յարոյց զնոսա ի մեռելոց:

176

Զկարգ բանիս որպէս ասացաք առ նեղութիւնս նոցա մարզիչ բերէ առաքեալս, և ընթացս աւրինակին զոր տայր յորդորիչ զխորհուրդ չարչարանացն Քրիստոսի, ածաւ յայս հրաշալի պատմութիւն. ազդել զոր ի դժոխս ներգործութիւն փրկութեան մահուանն կատարեաց:

Քանզի ոչ եթէ որքան գիտէին սուրբքն, այլ որ ինչ յաւգուտ լսողացն էր գրէին, զի մի զկատարեալ կերակուրն անկիրթ ճաշակելեաց ջամբեսցեն, ապա վերստին դարձուցանէ զբանն ի շաւիղն առաջին: Ի մէջ առեալ յարացոյց ընդ Քրիստոսի և զերբեմն ժամանակի Նոյեան տանն փրկութիւնն, որպէս զի այսու ևս հաստատեսցէ զկանխաւ ասացեալսն թէ լաւ է բարեգործացն ըստ Աստուծոյ. զի ահա տես զՆոյ թէ

---

[4] Il s'agit de la nature divine du Christ «avec ses prérogatives et ses privilèges, vue dans et à travers l'humanité qu'elle anime» (cf. CAMELOT, *op. cit.*, p. 29).

[5] En grec προσεδόκων, *attendre*.

TEXTE 176

[1] Allusion à *1P* 1, 6 et 3, 13-14.

[2] Cf. *1P* 3, 15-18.

[3] Cf. *1P* 3, 19-20.

[4] Cf. *1P* 3, 20.

[5] Cf. *1P* 3, 17.

175

De la réponse que Sévère écrivit à Ammonius.

Ce n'est pas à tous les captifs[1], mais seulement à ceux qui le reconnurent et crurent (en lui) qu'il accorda le pardon. Et le reconnurent, ceux qui s'étaient purifiés du mal en faisant le bien durant leur vie. Tous, en effet, même s'ils se conduisirent durant leur vie selon la justice, se trouvaient dans les enfers sous le joug de la mort, avant la venue du Christ, et ils attendaient sa venue rédemptrice, écartés du chemin du paradis en raison de la faute d'Adam.

Grégoire le théologien nous fait aussi savoir que tous ne profitèrent pas de la descente aux enfers, lorsqu'il explique pertinemment dans son discours de Pâques, les conséquences de la descente du Christ aux enfers. Il expose en ces termes la véritable puissance du mystère: «Puisqu'il est descendu aux enfers, descends avec lui et, là, reconnais le mystère du Christ, quelle est l'économie de cette double descente, quelle en est la raison: il sauve ouvertement du mal, par sa manifestation, tous ceux qui ont cru[2].» Quant à Ignace le théophore, il a parlé ainsi[3]: «Comment, nous, pourrions-nous vivre sans lui, lui dont les prophètes étaient aussi les disciples par l'esprit[4], le reconnaissant[5] comme leur maître. Et c'est pourquoi, celui qu'ils attendaient avec certitude les a ressuscités des morts par sa venue.»

176

Notre apôtre, qui instruit (les fidèles) dans leurs difficultés, comme nous l'avons dit[1], poursuit son discours, et, les exhortant à suivre l'exemple qu'il leur proposait - le mystère de la passion du Christ[2] —, il en est arrivé à cet étonnant événement: l'annonce que fit (le Christ) dans les enfers de son œuvre de libération de la mort[3].

Puisque les saints n'écrivaient pas tout ce qu'ils savaient, mais ce qui était utile à leurs auditeurs, afin de ne pas donner une nourriture raffinée à des esprits grossiers, (Pierre) réoriente donc son discours dans sa première direction. Il donne comme exemple de salut dans le Christ ce qui fut autrefois accordé aussi à la famille de Noé[4], dans le but de confirmer à nouveau ses paroles précédentes: «Il est bon pour ceux qui font le bien de souffrir conformément (à la volonté) de Dieu[5].» Observe Noé, combien de temps il

TEXTE 175

[1] La scolie précédente rapportait la question du didascale Césaire qui demandait à Sévère d'Antioche si les chaînes de tous les captifs, détenus aux enfers, étaient brisées. La réponse de Sévère, qui lui fait suite dans la version arménienne, montre que la scolie grecque Cramer 67, 17-68, 3, qui conserve également cette réponse, n'est pas à sa vraie place.

[2] *Oratio* XLV; *CPG* 3010; *PG* 36, 657B.

[3] *Epistula ad Magnesios* 9, 2; *CPG* 1025; éd. Camelot, *SC* 10², 1951, p. 104-105.

որքան ժամանակս երկայնամտեաց ի բարւոք քաղաքավարութեան կեցեալ ի մէջ մարդկանն. վասն այսորիկ և փրկութեան արժանացաւ ի նոցա կործանմանն, տապանաւն զերծեալ. որչափ ևս առաւել զձեզ շնորհ աւազանին ի Հանդերձեալ պատժոցն որ չարագործացն պահի փրկէ, միայն թէ երկայնամիտ լինիցիք յառժամանակեայ նեղութիւնս. ցուցանէ և զառաւելութիւն շնորհի մկրտութեանն, թէ Հոգւոց և մտաց է լուացումն, և խրատէ յարութեանն Քրիստոսի դաւանութեամբ զսա ընդունել:

177

Տես թէ ո°րպէս ստուգապէս զտնաւրէնութիւնն պատմէ, յիշատակեալ զմահն և զյարութիւնն և զհամբառնալն և զընդ աջմէ Հաւր նստելն, որպէս զի մի կարծեսցես կրիւք չարչարանացն և դոյզն ինչ նուազիլ նմա ի փառացն զոր ունէր. վասն այսր ընդ մարդանալոյն և մեռանելոյն, և զյարութիւնն ածէ զհամբառնալն և զընդ աջմէ Հաւր նստելն, և զամենայն զերաշխարհայնոցն նորա երկրպագութիւն. իսկ Հնազանդութիւն ներմարդկութեանն ասացաւ որոյ Աստուած գոլով զերկրպագութիւն մատուցին վերնական և Հրեշտակական Հոգիքն:

178

Ո՛վ թէ ո°րքան ձգտեցոյց զմիտս նոցա, զի մեռայք ասէ ընդ Քրիստոսի մկրտութեամբ, և ընդ նմա նորոգելոց էք ի մշտնջենաւոր փառսն. ապա զի նա ընդ որում ակն ունիք փառաւորել, մինչ ի մարմին էր և ի յերկրի ի չարչարանս եկաց, և նովաւ կատարեալ ել յաշխարհէ, պարտիք և դուք ի նոյնս գոլով նոյնպէս ի նեղութիւն զմիտս վառեալ. զի չարչարի մարմնով փոխանակ որ ի մկրտութիւն ընդ Քրիստոսի մահուն դնէ, որպէս և Պաւղոս, որք մեռաւորք ընդ Քրիստոսի, զի° ևս իբրև զկենդանիս աստէն յաշխարհի կրաւնաւորիք:

---

[4] Cf *Ph* 2, 6.
[5] Cf. *Ph* 2, 10.

TEXTE 178

[1] Cf. *Rm* 6, 4; 8, 18; *2Co* 4, 16; *Co* 2, 12; 3, 10.
[2] Cf. *He* 2, 10.
[3] *He* 2, 10; 5, 9. Le texte arménien exprime bien l'accomplissement (*katareal*) du Christ par la souffrance.
[4] Cf. *1P* 4, 1. L'auteur de la scolie applique ces mots au chrétien; le texte serait incompréhensible si on les entendait du Christ.
[5] *Co* 2, 20.

179

Աթանասի:

Վասն այնորիկ առաքեալ ոչ ասաց աստուածութեամբն չարչարել Քրիստոսի վասն մեր, այլ մարմնով, զի մի իւրական բնութեան Բանին ինչ ասիցի, այլ մարմնոյն իւրական բնութեան չարչարանքն ծանիցի:

Յետ սակաւուց:

Եթէ այլում էր մարմինն, այլում ասելի էր զչարչարանսն. ապա թէ Բանին մարմինն, վասն զի Բանն մարմին եղև, հարկ է զմարմնոյն կիրսն ասել նմա որում և մարմինն է. քանզի որում ասին կիրք, դատապարտելն, գան հարկանելն, խաչն, մահն, սմա ասին ուղղութիւն և շնորհ:

180

Կիւրղի:

Ոչ ապա ուրեմն հարկ է իմանալ զԲանն Աստուծոյ որ եղև վասն մեր մարմնով կամաւորապէս չարչարեալ. քանզի և այսպէս մկրտեցաք ի մահ նորա, ծանուցեալ զնոյն գոլ Որդի Աստուծոյ և ըստ բնութեան անչարչար և չարչարեալ մարմնով վասն մեր:

181

Սևերի:

Յայտնապէս ցուցանէ ասելն մարմնով եթէ նոյն ինքն առանց չարչարանաց մնայր ըստ աստուածութեանն, և ոչ զգայր ի չարչարանաց անտի այնպէս որպէս և

TEXTE 180

[1] Le traducteur arménien a lu οὔκουν, *oč' apa uremn* (*donc ne…pas*), au lieu de οὐκοῦν, *apa uremn* (donc).

[2] *1P* 4, 1.

[3] *Rm* 6, 3.

[4] *1P* 4, 1.

TEXTE 181

[1] *1P* 4, 1

179

D'Athanase.

C'est pourquoi l'apôtre (Pierre) n'a pas dit que le Christ a souffert pour nous dans la divinité, mais *dans la chair*[1], pour que quelque chose de ces souffrances ne soit pas dit appartenir à la nature du Verbe, mais pour qu'elles soient reconnues comme appartenant à sa nature charnelle.

Peu après[2].

Si la chair (du Christ) était celle d'un autre, d'un autre devraient être dites les souffrances. Mais si (elle est) la chair du Verbe, car le *Verbe s'est fait chair*[3], il faut que les tourments de cette chair soient dits de celui dont c'est la chair. Car c'est à celui dont on dit les tourments — jugement, flagellation, croix, mort — qu'appartiennent la droiture et la grâce.

180

De Cyrille.

Il faut donc comprendre[1] que le Verbe de Dieu, qui se fit (homme), a souffert volontairement *pour nous dans (sa) chair*[2]. C'est ainsi que *nous avons été baptisés en sa mort*[3], en sachant que ce même Fils de Dieu est impassible selon sa nature (divine) et que, pour nous, il se fit passible *dans sa chair*[4].

181

De Sévère.

Le fait de dire «*en sa chair*[1]» manifeste clairement que (le Fils), quant à lui, restait sans souffrir en sa divinité et ne ressentait aucunement ces souffrances, comme l'âme humaine les ressent, car la divinité est impassible. Et, de leur présence, elle n'éprouve aucune douleur, et rien ne peut le faire

TEXTE 179

[1] *1P* 4, 1.
[2] Le texte suivant vient en fait avant le précédent (voir supra, p. 43).
[3] *Jn* 1, 14.

զգայ մարդկայինս Հոգի, վասն զի աստուածութիւնն անչարչար է. և ոչ յիրիք պատահմանէ առնու մորմոքումն, և ոչինչ յունակութենէ յանչարչարելի սահմանէն արտաքս գտցի. այլ աստուածութիւնն չարչարանացն եղև չարչարիչ, զի հատցէ զխայթոց մահու չարչարական մարմնովն զոր ունէր:

182

Նորին, ի թխթոյն որ առ Անդրանիկոս միաբանութեանցն սահմանող:

Քրիստոսի չարչարելն վասն մեր մարմնով այսպէս է իմացեալ ի մէնջ ըստ կանխաւ քան զայս եղելոյ բանին. թէ միանգամ վասն մեր չարչարեցաւ Քրիստոս, և մեռաւ արդարն ի վերայ անարդարոց, մեռեալ մարմնով և կենդանացեալ Հոգւով. արդ քարոզելովն զՔրիստոս չարչարեալ և մեռեալ մարմնով յայտնապէս ցուցանէ ըստ որում էր նա չարչարելի մարմնով և անչարչարելի աստուածութեամբն. սակայն ոչ բաժանեաց յետ անճառելի ծննդեանն յերկաքանչիւրսն բնութեանցն, այլ մի գոլով Տէր և Քրիստոս և Որդի, մի դէմ և մի անձնաւորութիւն Բանին մարմնացելոյ, չարչարեալ և մեռեալ կամաւորապէս. ըստ որում եղև մարդ և մնացեալ Աստուած, ըստ գոլոյն Աստուած յառաջ քան զյաւիտեանս Համագոյակից զնոյն Հաւր և Սուրբ Հոգւոյն, և մեզ Համագոյ և Համաչարչար ճշմարիտ խորհրդով ընդունիմք:

183

Նորին յորս առ ի Կոստանդնուպաւլիս ուղղափառսն թղթոյն:

Քրիստոսի չարչարել վասն մեր մարմնով, ո՛չ եթէ ըստ կարծեաց ոմանց ցրտաբանից լծորդութիւն անուանի, այլ մի և անկրճատելի տեսանի, զի սա քանզի կամեցաւ զանյեղափոխելի Միածին, Բանն որ անչարչարելի է ըստ աստուածութեանն ասել չարչարեալ. վասն այսորիկ Հարկաւորի և զսահման չարչարելոյն ցուցանել, յաւելեալ զմարմնովն Բանին անչարչար գոլով. սակայն մի յերկաքանչիւրոցն Էմանուէլն ըստ աստուածութեանն ասեմ և ըստ մարդկութեանն. ուրեմն

---

[3] *1P* 4, 1.

[4] «*Bnut'iwn, nature*, φύσις» a été conservé par le traducteur arménien.

[5] *1Co* 8, 6.

[6] «*Dēm*, πρόσωπον».

[7] «*Anjnaworut'iwn*, ὑπόστασις».

TEXTE 183

[1] *1P* 4, 1.

[2] Pour des expressions analogues sur l'impassibilité, voir LEBON, *Le monophysisme sévérien*, p. 215-235.

sortir de cet état, de la sphère de l'impassible[2]. Cependant, Dieu lui fit souffrir ces souffrances, afin d'enlever l'*aiguillon de la mort*[3] qu'il possédait *en sa chair*[4] passible.

182

Du même. De la lettre à l'archimandrite Andronicus.

Que le Christ ait souffert pour nous dans la chair[1], nous le comprenons selon le verset qui précède: «*Une seule fois, le Christ a souffert pour nous et le Juste est mort pour les injustes, mis à mort dans la chair et rendu à la vie par l'Esprit*[2].» Par conséquent, en proclamant que le Christ *a souffert* et est mort *dans la chair*[3], (Pierre) manifeste ainsi clairement que lui, (le Christ), était passible en sa chair et impassible en sa divinité. Cependant, après sa naissance ineffable, il n'a pas séparé l'une des natures de l'autre[4]; mais ce n'est qu'en étant *un seul Seigneur*[5], Christ et Fils, une seule personne[6] et une seule hypostase[7], celle du Verbe incarné, qu'il souffrit et mourut volontairement. Ainsi, il se fit homme tout en restant Dieu, puisqu'il est Dieu avant les siècles, consubstantiel au Père et au Saint Esprit; et nous l'accueillons, en son mystère, comme notre vrai compagnon de vie et de souffrances.

183

Du même. De la lettre aux fidèles de Constantinople.

Que le Christ ait souffert pour nous dans la chair[1], ce n'est pas, comme certains le pensent, un assemblage de termes sans signification, mais cela exprime que (le Christ) est un et indivisible: (Pierre) a voulu dire ainsi qu'a souffert celui qui est immuable, le (Fils) unique, le Verbe, lui qui est impassible selon sa divinité. C'est pourquoi, l'on doit aussi nécessairement montrer les limites de cette souffrance, en ajoutant que tout en étant *dans la chair*[1], le Verbe est impassible. Cependant, je dis qu'en ces deux réalités, l'Emmanuel est Un selon sa divinité et son humanité[2]. L'apôtre introduit

[2] Sur l'absolue immutabilité du Verbe dans l'Incarnation selon Sévère d'Antioche, voir LEBON, *Le monophysisme sévérien*, p. 205-212.
[3] *1Co* 15, 56.
[4] *1P* 4, 1.

TEXTE 182

[1] *1P* 4, 1
[2] *1P* 3, 18.

կարևորապէս առաքեալն նորին ի վերայ նորա զայս սահման ի մէջ ած, որպէս զի ծանիցուք զչարչարեալն անչարչար և զանչարչարն չարչարանաց կրող ըստ մարմնոյ:

184

Նորին ի նոյն:

Քրիստոսի չարչարեալ մարմնով, Պետրոս Հարկաւորի ասել, որպէս զի զսահման չարչարանացն միոյ պատկերի, միոյ դիմաց, և միոյ անձնաւորութեան, և միոյ բնութեան Աստուծոյ Բանին մարմնացելոյ դիմաց իմասցուք ասել զչարչարանսն. զի թէ յերկուս բաժանէր, յոյժ աւելի էր զարմանալի բան, Հիացուցանող բնութեան մտաց և իմաստութեան զչարչարելին վերստին առնու և ասել չարչարեալ մարմնով. այլ քանզի Աստուած էր անչարչարելի և վասն մեր անփոխադրապէս՝ չարչարելի եղև մարդ, Քրիստոս մեզ քարոզեցաւ չարչարեալ մարմնով:

185

Կիւրղի:

Որպէս և էր էութեամբ Աստուած Քրիստոս, իմաստութեամբ և Հանճարեղապէս աշակերտն մարմնով չարչարեալ զնա ասէ. արտաքս Հանեալ ի կրիցն զանճառելի բնութիւնն որում աւտար է չարչարելն. այլ վայելչական էր կրել մարմնով, քանզի յԱստուծոյ Բանն Աստուած անմասն է սովորութեան չարչարանաց. ապա յայտ է Քրիստոս թէ աստուածութեամբն անչարչար է, իսկ չարչարելի ըստ մարմնոյ:

TEXTE 185

[1] *1P* 4, 1.

[2] «*Bnut'iwn*, φύσις»; une seconde main a ajouté, dans *J 1301* seulement, «de Dieu».

[3] Cf. *He* 2, 10.

donc cette limite à son sujet[3], pour que nous reconnaissions comme impassible celui qui a souffert, et porteur de souffrances[4] selon la chair celui qui est impassible.

184

Du même. Aux mêmes.

Le Christ a souffert dans la chair[1], s'empresse de dire Pierre, afin que nous sachions les limites de cette souffrance: c'est à l'unique forme[2], à l'unique personne, à l'unique hypostase et à l'unique nature de la personne du Verbe de Dieu incarné qu'est attribuée cette souffrance. En effet, si on (le) divisait en deux, la parole (de Pierre) serait fort étonnante: ce serait d'une intelligence et d'un raisonnement un peu surprenants que de se servir du (terme) «passible», puis de dire qu'*il a souffert dans la chair*[3]. Mais, puisque Dieu était impassible et que, pour nous, il se fit, tout en restant immuable, homme passible, le Christ nous a été annoncé comme *ayant souffert dans la chair*[4].

185

De Cyrille.

Comme le Christ est Dieu par essence, c'est avec sagesse et raison que le disciple affirme qu'*il a souffert dans la chair*[1], tout en soustrayant aux souffrances la nature[2] ineffable de celui qui est étranger à la souffrance. Mais il convenait qu'il souffrît[3] *dans la chair*, bien que le Verbe de Dieu, en tant que Dieu, ne participe pas à la condition souffrante. Il est donc clair que le Christ est impassible selon sa divinité, mais passible selon la chair.

[3] Le Fils de Dieu n'a souffert que *dans la chair* (*1P* 4, 1).
[4] Cf. *Is* 53, 4.

TEXTE 184

[1] *1P* 4, 1.
[2] «*Patker*, εἰκών, *image*», terme qui désigne la personne du Fils (cf. LAMPE, *Lexicon*, p. 415-416); mais ici il s'agit plus vraisemblablement de μορφή, autre terme de la christologie sévérienne, employé concurremment avec πρόσωπον, ὑπόστασις et φύσις (cf. LEBON, *Le monophysisme sévérien*, p. 281-283). Cependant ni εἰκών ni μορφή ne se trouvent dans le texte de la scolie grecque.
[3] Dans la pensée de Sévère, l'emploi du terme «*souffrir*» rendrait en effet inutile la précision «*dans la chair*» ajoutée par Pierre, si la divinité et l'humanité du Christ étaient séparées.
[4] *1P* 4, 1.

186

Գրիգորի աստուածաբանի:

Չարչարելի ըստ մարմնոյ, և անչարչարելի ըստ աստուածութեանն:

187

Սևերի:

Զայս խրատէ թէ պատշաճ է ի հեթանոսական և ի զեղխ գործոցն հրաժարել, և մի ընթանալ ընդ հին սովորութիւնսն և մի նախանձել ընդ նոսա որք դանդաչեալ առ այս վարկանին:

188

Տեսեալ զի այդպէս ի բարին դարձայք, ոչ նախանձին նմին, այլ յուրաստ կան տարակուսեալք. զձեզ չունելով արշաւակիցս անառակութեան և անկարգութեան և յիմարապէս զհայհութիւն զգայուն, կամակորեալք անզղջապէս ի վատթար հեշտութիւնսն:

189

Սևերիոսի յորմէ ընդ Աղեկսանդրոսի համակարգութեանն:

Ջհանդերձելոցն ասէ աստանաւր ի պատրաստի կացեալ դատաստան, այսինքն արագ քան զբան, դիւրաւ և հեշտութեամբ. և ոչ ինչ ունելով խափան, այլ վաղվաղակի ամենայն մերկք առաջի նորա կացցեն ի դատ իրաւանց մեղաւորաց և արդարոց. և դատեալ բաժանէ զնոսա ի միմեանց յայնժամ որպէս և ասաց ինքն փրկիչն, և կացուցանէ զաւդիսն ընդ աջմէ իւրմէ և զայծիսն ընդ ձախմէ. իսկ առաքեալս զարդարս կենդանիս անուանէ վասն բարեացն գործոց զորս ապագայիցն

TEXTE 189

[1] Cf. *1P* 4, 5.
[2] Cf. *Mc* 4, 22; *Lc* 12, 2
[3] *Mt* 25, 33.
[4] Cf. *1P* 4, 5.

186

De Grégoire le théologien.

Passible selon la chair et impassible selon la divinité.

187

De Sévère.

(Pierre) conseille ceci: il convient de s'abstenir des œuvres des païens et des débauchés[1], de ne pas courir après les anciennes habitudes et de ne pas envier ceux qui, dans leur délire, ne pensent qu'à elles.

188

Voyant ainsi que vous vous êtes convertis au bien, ils ne l'envient pas, mais le récusent dans leur apostasie. Ne vous ayant plus pour complices de débauches et d'orgies, ils vomissent stupidement l'outrage[1] (et) se pervertissent obstinément dans des plaisirs infâmes.

189

De Sévère, du traité contre Alexandre.

(Pierre) parle ici de ce qui doit avoir lieu lors du jugement *qui est préparé*[1], c'est-à-dire qui (sera prononcé) plus rapidement que la parole, avec aisance et facilité. Aussi rien ne peut y faire obstacle, mais soudain tous seront mis à nu devant lui[2] pour l'équitable jugement des pécheurs et des justes. Et celui qui juge les séparera alors les uns des autres, comme l'a dit le Sauveur, et *il placera les brebis à sa droite et les chèvres à sa gauche*[3]. Aussi, notre apôtre appelle «*vivants*»[4] les justes, ceux qui en raison de leurs œuvres bonnes ont été préparés pour la vie future; et (il appelle) «*morts*» les pécheurs, conduits à

TEXTE 187

[1] Cf. *1P* 4, 3.

TEXTE 188

[1] Cf. *1P* 4, 4.

կենացն պատրաստեցին, և մեռեալս զյանցաւորսն զմեղաւք մեռեալսն և ընդ մեռեալս համարեալ մահացու գործովք. առ այս հայի և Դաւթայ ասելն, կոչեսցէ զերկինս ի վերուստ և զերկիր ի դատել զժողովուրդ իւր. զերկնից արժանագործս երկինս կոչէ, իսկ երկիր զորս երկրայինս գործեն և բևեռեալ են յերկրի, և ի վերուստ ասելն զթռչելն և զբարձրանալն նշանակէ. իսկ որք անասնական զէտնաքարշութեամբ զերագութիւն թևոցն յապաւեցին, և ոչ ունիցին պատասխանի, և ոչ հասանիցեն վերին մատակարարութեանն. արժանապէս անուանեցան երկիր:

190

Սևերիոսի Անտիոքու:

Մեռեալս կոչէ զորս ընդ հեթանոսս հաւասարին և մեղաւք զանձինս մեռուցանեն, իսկ խոստումն նոցա է խրատն և սպառնալիք հանդերձեալ տանջանացն. արդ այսու զարթուցանէ զնոսա յապաշխարութիւն, քննել զանձինս թէ որպէս կարասցեն անամաւթ պատասխանել այնմ յորում դատն պատասխանեալ են կենդանիք և մեռեալք, այսինքն արդարք և մեղաւորք. զի եթէ քննեսցեն և անձամբ զանձինս դատեսցեն ի մարդկային կեանս, և դարձցին ի մեռելութենէ մեղացն ապաշխարութեամբ պահաւք և աղաւթիւք, երկրամերձ արտասուաւք յայնժամ կենդանի լիցին ըստ Աստուծոյ Հոգւով մշտնջենաւոր կենացն վիճակեալք. ըստ առաքելոյն, թէ արտաքին մարդս մեր ապականի, ներքին մարդս մեր նորոգի առաւել քան զառաւել:

191

Հարց:

Զի՞նչ իցէ, ի սոյն իսկ և մեռելոց խոստացեալ է, զի դատեսցին ըստ մարդկան մարմնով և կենդանի լիցին ըստ Աստուծոյ Հոգւով. և զիա՞րդ մեռեալք դատեսցին:

---

[5] *2Co* 4, 16 «*...se renouvelle de jour en jour*», dans la scolie grecque, la version biblique arménienne (*Z*, sans variantes) et les textes latin et grec du *Nouveau Testament*.

TEXTE 191

[1] *1P* 4, 6.

la mort par leurs fautes et regardés comme morts en raison de leurs œuvres de mort. Que l'on fasse attention aussi à ce que dit David: «*Il convoquera les cieux d'en haut et la terre pour le jugement de son peuple*[5].» Il appelle «*cieux*» ceux qui font des œuvres dignes des cieux, mais «*terre*» ceux qui font des œuvres terrestres et qui sont attachés à la terre, et le terme «*en haut*» signifie que l'on vole et que l'on s'élève. Aussi ceux qui sont devenus bestiaux par leur amour du monde et qui ont détruit l'agilité de leurs ailes, ceux-là n'auront pas de réponse et ne parviendront pas à la récompense céleste. C'est de façon tout à fait juste qu'ils ont été appelés «*terre*».

190

De Sévère d'Antioche.

(Pierre) appelle «*morts*»[1] ceux qui ressemblent aux païens et qui, par leurs péchés, se tuent eux-mêmes; quant à la promesse[2], elle tient lieu pour eux d'avertissement et de menace des châtiments à venir. (Pierre) les incite donc à la pénitence, à examiner eux-mêmes comment, sans rougir, ils pourront répondre à celui auquel auront à répondre au jugement *vivants et morts*[3], c'est-à-dire justes et pécheurs. Car s'ils s'examinent et se jugent eux-mêmes durant leur vie humaine, et s'ils se détournent de la mort causée par le péché, au moyen de la pénitence, du jeûne et de la prière, prostrés dans les larmes, alors *ils vivront selon Dieu dans l'Esprit*[4], élus pour la vie éternelle. Selon l'Apôtre, *si l'homme extérieur, en nous, va vers sa ruine, l'homme intérieur, en nous, se renouvelle de plus en plus*[5].

191

Question.

Que signifie: «*C'est pour cela, en effet, qu'il est allé prêcher même aux morts, afin qu'ils soient jugés selon les hommes dans la chair, et qu'ils vivent selon Dieu par l'Esprit*[1]»? Mais comment des morts peuvent-ils être jugés?

[5] *Ps* 49, 4.

TEXTE 190

[1] Cf. *1P* 4, 5.
[2] «*Xostumn*», allusion à «l'annonce de la bonne nouvelle» du verset *1P* 4, 6
[3] Cf. *1P* 4, 5.
[4] *1P* 4, 6.

Պատասխանի:

Սովորութիւն է աստուածաշունչ գրոց ընդ միմեանս փոխել զժամանակս և առնուլ զներկայս իբրև զհանդերձեալն, և զհանդերձեալն իբրև զներկայս, զառ ժամանակայն իբրև զառաջակայն՝ իսկ զյետ ժամանակին որպէս զարդէն կոչեն, յայտ է այս ի քննութիւն իւրաքանչիւրոցն որոց փորձիւն տեղեկանան:

Իսկ աստ զորս մեռեալս կոչեաց, զնոսա որ յառաջ քան զգալուստն Քրիստոսի վախճանեցան ասեն, որպէս զորս ի Ջրհեղեղին, և ի ժամանակս աշտարակաշինութեանն, որք ի Սոդոմ կամ յԵգիպտոս, նաև յայլ բազում տեղիս և ի դարս, որք ընկալան զաստուածային պատիժն ըստ իշխանական բերմանն բազմադիմի հարուածովք, ոչ այնքան յաղագս առ Աստուած յանցաւորութեանն որչափ վասն առ միմեանս անմտութեանն պատուհասեալք: Սոցին զընկալեալ սաստն հարուածոց մարդկային մարմնով յիւրաքանչիւր դարս, երանելիս որպէս զանեղ դնէ ասելով, խոստացեալ է մեռելոց զի դատեսցին ըստ մարդկան մարմնով. սակայն զզաւրութիւն բանիս այսպէս իմասցուք թէ որք դատեցան յաշխարհի մարմնով ըստ մեղաց իւրեանց, խոստացաւ նոցա աւետարանել զմեծ փրկութեան քարոզութիւն, եթէ վասն զի դատեալք ի մարմնաւոր կեանքս, հատուցին զյանցանաց իւրեանց վրէժ, արդարութիւնն Աստուծոյ կենդանիս ստասցի զնոսա ի հանդերձեալն Հոգւով. և եղև այս ըստ այսմ աւրինակի. քանզի յորժամ էջ Տէրն քարոզ ի դժոխսն, հոգիք նոցա զաւրեցին ընդունել զաստուածային աւետարանութիւն փրկչին և հաւատալ, սակս որոյ և փրկութեան գտան արժանիք. զայս և յայլոց այսպէս իմացեալ ընկալաք:

Իսկ մեզ այսպէս կարծելի է, թէ մեռեալս զորս զմահն Քրիստոսի յանձինս բերին ասէ առաքեալս զանխլաբար, և զի պատշաճապէս է ասացեալս. ճշմարիտ է աստուածային աւետարանն զմեռելութիւն քարոզելովն, որ կամի զանձն իւր կեցուցանել կորուսցէ զնա և զխաչ և զմահ բարձեալ աստուածային ընթացիցն լիցի հետևող, և խոստանայ այսպիսեացս զճշմարիտ կենդանանալն Հոգւով, և թերևս ոչ դատին ըստ մարդկային կենացս ի մարմնի. որք աշխարհիս ցանկութեան մեռեալք Հոգւոյ կենդանացան, կենդանի յինքեանս միայն զՔրիստոս ունելով, ըստ որում տայր Պաւղոս զանձին տարացոյց որ և զդատելոյն կրից վտանկն պատմէր, վիշտս անթիւս, բազմապատիկ չարչարանս, արհաւիրս և փորձութիւնս բիւրաւորս. սոցա ամենեցուն ինքն և որ ըստ նմայն ուրախութեամբ համբերեցին դատեալք միշտ ի մարմնաւոր կեանս զմարմինսն. վասն որոյ և կենդանացան ըստ կամացն Աստուծոյ Հոգւով զմշտնջենաւոր կենդանութիւնն:

---

[3] *2Co* 4, 10.

[4] *Mt* 16, 25. Cette citation et l'allusion suivante sont seulement suggérées (ζωῆς ἄρνησιν) dans le texte de Maxime et la scolie Cramer.

[5] *Mt* 16, 24.

[6] Cf. *2Co* 11, 16-33.

[7] Ici s'achève l'*Interrogatio VII* de Maxime le Confesseur (cf. LAGA-STEEL, p. 75.).

Réponse.

C'est l'habitude des Écritures inspirées d'échanger entre elles les époques, et de prendre le présent pour le futur et le futur pour le présent; elles désignent ce qui doit arriver comme ce qui est actuel, voire même, ce qui est passé comme du présent. Ceci est évident au regard de chacun de ceux que l'expérience instruit.

Cependant, certains disent que (l'Écriture) appelle ici «*morts*» ceux qui sont décédés avant la venue du Christ: ceux qui (périrent) lors du déluge et à l'époque de la construction de la tour; ceux qui (périrent) à Sodome, en Égypte, et en de nombreux autres lieux et siècles encore; ceux qui, en divers malheurs, encoururent, selon la décision souveraine, les châtiments divins, punis non pas tant à cause de leur péché vis-à-vis de Dieu qu'en raison de leur inimitié les uns vis-à-vis des autres. La réprimande qu'ils subirent, en châtiment, dans leur chair d'hommes, à chaque siècle, notre bienheureux (Pierre) la considère comme non définitive, puisqu'il affirme: «*Il est allé prêcher aux morts afin qu'ils soient jugés selon les hommes dans la chair*[1].» Mais comprenez ainsi le sens de ce passage. A ceux qui furent jugés en ce monde *dans la chair*, en raison de leurs péchés, *il est allé prêcher la bonne nouvelle*, l'annonce importante du salut. S'ils furent jugés durant leur vie *dans la chair*, subissant la vengeance de leurs fautes, la justice de Dieu viendra les reprendre, vivants, pour la vie à venir *dans l'Esprit*. Et cela se déroula selon ce plan. En effet, lorsque le Seigneur descendit aux enfers, comme un héraut[2], leurs esprits purent recevoir l'annonce divine de la bonne nouvelle d'un Sauveur, et (ils purent) y croire. C'est en considération de cette (foi) qu'ils ont été trouvés dignes d'être sauvés. C'est ainsi que nous avons compris ces (paroles) et, de même, en d'autres (passages).

Cependant, il nous faut aussi penser que, de façon voilée, notre apôtre dit «*morts*» *ceux qui portent la mort du Christ dans leur corps*[3], et c'est à juste titre que ceci a été dit. L'Évangile de Dieu exhorte vraiment à mourir: «*Celui qui veut sauver sa vie la perdra*[4]», et c'est en supportant la croix et la mort qu'il marchera sur les pas divins[5]. C'est bien à de tels gens qu'il promet la vraie vie *dans l'Esprit*, et peut-être ne seront-ils pas jugés selon leur vie d'hommes *dans la chair*. Ceux qui étaient morts aux convoitises de ce monde ont revécu *dans l'Esprit*, vivants, ayant en eux-mêmes le Christ uniquement, à la manière dont Paul se donnait en exemple, lui qui, dans la peine de se voir jugé, énumérait ses périls: tribulations innombrables, tourments divers, terreurs et épreuves multiples[6]. En tout cela, lui-même et ceux qui lui ressemblaient persévérèrent dans la joie, sans cesse jugés *dans la chair* durant leur vie charnelle[7]. C'est pourquoi, conformément à la volonté de Dieu, ils ont revécu à la vie éternelle *par l'Esprit*.

[1] *1P* 4, 6.
[2] Cf. *1P* 3, 19.

Եւ մեք թէ ախորժեմք առ այս կեանս նուաճեալ զանձինս բարեջան աշխատութիւնս տնաւրինեսցուք, վարս բարիս յարդարեսցուք զգոյշ լիցուք, թերևս զուարթերես յաստեացս փոխադրիցիմք. և անստգտանելի մտաւք ճանապարհորդեսցուք ի հանգիստն հանդերձեալ սրբոցն որ ի Քրիստոս Յիսուս, որոյ վիճակի և կատարման ոչ հասին հելլենացւոցն ժողովքն, դեգերեալք ի վայրապար ցանկութիւն արհեստի սնոտի տեսութեան և մակացութեան, միայն յերկրայինս խոկումն պշուցեալ իմաստասիրացն մանկունք. իսկ հաւատացելոց առաքինութիւն յերկինս է, և ի կատարումն իմաստից Քրիստոս որպէս ասացաւն, մեք ոչ այլ ինչ գիտեմք բայց միայն զՅիսուս Քրիստոս, յաւելեալ ի վերատրից պարգևաց զքրիստոսնանուն. որով ևս լինիմք գերակատարք, վասն զի սատ բերի ընդ նմին կեանք և լոյս և այլ ամենայն բարիք:

192

Սևերի:

Մեռեալս գիտէ աստուածային գիրք զմեղաւորս, մահացեալս յանցանաւք ըստ հոգւոյ: Սոքա թէ դատին յաստիս մարմնով ճգնութեամբքն ի բաց վտարեալ զմեղսն, կենդանութեան որ ըստ Աստուծոյ է հասցեն Հոգւով. զսոյն և Պաւղոս Եփեսացւոցն գրէր, ճաք արդարև որդիք բարկութեան որպէս և այլքն. իսկ Աստուած որ մեծն է ողորմութեամբ յաղագս բազում սիրոյն իւրոյ զոր սիրեացն զմեզ կենդանացոյցն զմեզ ի մեռելութենէ մեղացն Քրիստոսիւ: Իսկ եթէ առնուցումք և ի հակառակէն. դարձեալ գրոց կարգ է մեռեալս դնել զորս ախտիցն սպանին զմարմինս և զմիտս, հակառակ նոցա միշտ յարուցեալ զառաքինութիւնսն, ըստ որում յառ Հռոմայեցիսն թուխթն. մարմին մեռեալ է վասն մեղացն և հոգին կենդանի է վասն արդարութեան. և յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք:

193

Նորին:

Վասն զի ոչ միայն վասն արդարոց, այլ և մեղաւորաց, մանաւանդ ի մահ մեղուցելոց քարոզեցաւ աւետարանն, առ ի կանխել և յառաջագոյն ընտրել զար-

TEXTE 192

[1] Cf. *1P* 4, 6.

[2] *Ep* 2, 3-4. Texte différent de ceux de Cramer, de *NT*, de *Z* et de leurs variantes.

[3] *Rm* 8, 10. L'esprit est «*kendani, vivant*» (c'est aussi le texte de *Z* sans variante), et non «ζωή, *vie*» comme dans les textes de Cramer et du *NT*; la leçon arménienne est connue en syriaque (cf. KERCHENSTEINER, *Paulustext*, p. 24-25).

[4] *2Co* 4, 10. «Nous devons porter, *kresc'uk'*», ici et dans *Z* (sans variante), un subjonctif présent — exprimant une possibilité, l'intention ou la volonté —, face au participe présent en grec, dans le texte de Cramer et du *NT* (sans variante).

Et nous, si nous aspirons à cette vie, appliquons-nous avec soin au travail en nous dominant nous-mêmes, veillons à avoir une bonne conduite; peut-être aurons-nous le bonheur d'être transférés d'ici-bas. Puis, avec un esprit irréprochable, cheminons vers le lieu du repos à venir, celui des saints, qui (est) dans le Christ Jésus. Ce sort et cette perfection, les peuples de la Grèce ne l'obtinrent pas; ils s'adonnaient aux futiles plaisirs de l'art, à une spéculation vaine et à la science. Fils de philosophes ne s'arrêtant qu'à des pensées terrestres! Pour les croyants au contraire, la vertu réside dans les cieux, et le Christ (est) au terme de la connaissance, ainsi qu'il a été dit: «*Nous, nous ne savons rien d'autre, si ce n'est Jésus Christ*[8]» qui comble de dons surabondants le nom de chrétien. Grâce à lui, nous devenons encore plus parfaits, car il apporte avec lui, en ce monde, la vie[9], la lumière[10] et toute autre (sorte) de bienfaits.

192

De Sévère.

Les divines Écritures reconnaissent comme *morts*[1] les pécheurs qui se sont livrés à la mort par les fautes de leur esprit. Ceux-là, s'ils *se jugent*[1] ici-bas *dans la chair*[1], en repoussant leurs péchés par la mortification, obtiendront la vie divine *par l'Esprit*[1]. Paul écrivait la même chose aux Éphésiens: «*Nous étions vraiment fils de la colère, tout comme les autres, mais Dieu qui est riche en miséricorde, à cause du grand amour dont il nous a aimés, nous a donné la vie avec le Christ, (en nous arrachant) à la mort du péché*[2]*.*» Mais nous pouvons comprendre aussi d'une autre façon. Le sens des Écritures est aussi de considérer comme *morts* ceux qui, par leurs passions, ont tué leurs corps et leurs intelligences, toujours dressés contre la vertu, selon ce qui est écrit dans la *Lettre aux Romains*: «*Le corps est mort à cause du péché et l'esprit est vivant à cause de la justice*[3]*.*» Et: «*A toute heure, nous devons porter la mort de Jésus en nos corps*[4]*.*»

193

Du même.

Car ce n'est pas seulement pour les justes, mais aussi pour les pécheurs, surtout pour ceux qui ont incité au péché entraînant la mort, que la bonne

[8] *1Co* 2, 2.
[9] Cf. *Jn* 11, 25.
[10] Cf. *Jn* 8, 12.

ժամն: Արդ եթէ ոք յանցաւոր, թէ և ի մահ իցէ մեղուցեալ, աստ դատեսցէ զանձն իւր ցաւաւք և ապաշխարութեամբ, յաստուածային սոսկալի դատաստանէն յափշտակէ զնոյն, յոր ահագին է անկանել որպէս ասացաւ. զի եթէ Հոգւով զգործս մարմնոյ սպանանէք կեցջիք, առաք խրատ:

194

Մարգարէն ասէ ոչ կացցեն ամբարիշտք ի դատաստանի որք են յամբարշտութենէ մեռեալքն նախ քան զգալուստն Քրիստոսի: Իսկ մարդասիրութիւն փրկչին զայս ի դերև եհան զմարգարէութիւն, յորժամ էջ ի դժոխսն: Քանզի քարոզեաց և նոցա հաւատալ յաստուածութիւնն իւր. և այսմ խորհրդոյ խորհրդազգած առաքեալ նորին, յորժամ ասաց զպատրաստեալ դատաստանն կենդանեաց և մեռելոց. յաւել և զայս ցուցանել թէ ի սոյն ատեան և մեռելոցն կանխաւ յանհաւատութիւն և իջանել առ նոսա փրկիչն հաւատացելոց խոստացաւ Քրիստոս. զի ի ժամանակի յարութեանն կացցեն առաջի թագաւորին ի դատաստան, և ի տալն իւրաքանչիւր ումեք ի ձեռս նորա զհաւատս ուղիղս և գործս բարիս, և փոխանակ այնորիկ պսակիլ: Նոքա բերեն յառաջ միայն զոգւոցն հաւատալն, թուլացուցեալ նոցին զդատելն մարմնով, որպէս զորս յետ գալստեանն և աւետարանին յոր ոչ ժամանեալք, միայն վասն հաւատոցն արժանացին փառաց յարդար դատաւորէն:

195

Մինչև ցայժմ վասն աղաւթից ոչ ինչ ճառեաց նոցա, այլ ի կատարածս դնէ, յետ սնոտի տեսութեան և մակացութեան, միայն յերկրայինս խոկումն պշուցեալ իմասմիոջէ զխրատ ատելոյ զմեղսն և սիրելոյ զբարեգործութիւնն. յետ այսորիկ վայելչապէս զարթուցանէ յաղաւթել, քանզի անկար է մինչդեր միտք մեր յաշխարհական պատաղմունս վարակին աղաւթել որպէս պարտ է:

---

[2] Au lieu de l'ablatif (en toutes lettres, sans abréviation) du ms *J 1301*, le ms *W 1470* emploi ici le locatif (*yamparštut'ean*)

[3] *Tt* 3, 4.

[4] Cf. *1P* 4, 6.

[5] *1P* 4, 5.

[6] *1P* 4, 6.

[7] Cf. *Mt* 25, 34.

[8] *1P* 4, 6.

TEXTE 195

[1] Cf. *1P* 4, 7.

nouvelle a été annoncée[1], afin qu'ils se hâtent de choisir ce qui leur convient. Donc, si quelque pécheur, même s'il a incité à un péché entraînant la mort, s'est jugé lui-même, ici-bas, dans les souffrances et la pénitence, (le Christ) le soustrait au redoutable jugement divin sous lequel, comme cela a été dit, *il est terrible de tomber*[2]; car si *par l'Esprit vous faites mourir les œuvres de la chair*[3], vous vivrez. Recevons cet avis.

194

Le prophète dit: «*Les impies ne se relèveront pas lors du jugement*[1]», eux qui moururent dans l'impiété[2] avant la venue du Christ. Mais *l'amour du Sauveur pour les hommes*[3] annula cette prophétie, lorsqu'il descendit aux enfers. Car il leur prêcha[4], et ils crurent en sa divinité. C'est à ce mystère que son apôtre a été initié, lorsqu'il a dit que son jugement *est préparé pour les vivants et pour les morts*[5]. Il a précisé ceci pour montrer que (viennent) à ce tribunal *même ceux qui sont morts*[6] avant (le Christ) dans l'ignorance de la foi, et que le Christ, Sauveur de ceux qui croient, avait promis de descendre vers eux. Car, à l'instant de la résurrection, on se tiendra devant le roi[7] pour le jugement, afin que quiconque possède une foi droite et de bonnes œuvres soit rétribué et, en raison de cela, couronné. Quant à ceux qui ne présentent que la foi de leurs âmes, (le Christ) atténuera pour eux le jugement *dans la chair*[8], de sorte qu'ils soient rendus dignes de la gloire par le juste juge en raison de leur foi seulement, eux qui (crurent) après la parousie (du Christ) et après l'évangile auquel ils n'eurent pas accès.

195

Jusqu'à présent, (Pierre) ne leur a pas parlé du tout de la prière, mais il le fait en terminant, après avoir rappelé de diverses façons les bienfaits que nous avons reçus de Dieu et, l'un après l'autre, les conseils concernant la haine du péché et l'amour de Dieu. Après cela, comme il convient, il exhorte à prier[1], car il est impossible de prier tant que notre esprit est enfermé dans les préoccupations de ce monde.

TEXTE 193

[1] Cf. *1P* 4, 6.
[2] *He* 10, 31.
[3] *Rm* 8, 13.

TEXTE 194

[1] *Ps* 1, 5.

196

Ծածկէ զմեղսն ողորմութեամբ որպէս Դանիէլն առ Նաբուգոդոնոսորն ասէր, զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, և զանաւրէնութիւնս քո գթովք տնանկաց:

197

Կիւրղի:

Որք զսեղանս աւտարացն դնեն, եզիցին զուարթունք յաւժարք, ոչ իբր զտուողս, այլ մանաւանդ որպէս ինքեանց առողք կրկին դիմաւք սիրել. նախ խաւսիւք և Հարցմամբ զականջս աւտարոյն փափկացուցանել, և ապա զաւտարսիրութեան պիտոյսն պատրաստել. և մի Հոգասցեն բազում ինչ մատակարարել, այլ զառ ձեռն պատրաստն և զկարն խնդրեսցեն. քանզի առ ամենայն ինչ աւելորդն խոտան է:

198

Զորոց առ մեզս են և որոց եմք տեարք, մի անխայել ամենևին պատուիրեն գիրք. զի ոչ միայն զինչս և զստացուածս որք ունին և արտաքին գոյսն, պարտական են մատակարարել խնդրողաց կարաւտելոցն, այլ և ի բնականին աւելորդացն և ի Հոգևոր շնորՀացն, և ոչ առանձինն թաքուցանել զոր ունի, այլ ընկերին մատակարարել և լինել զպակասութիւն նորին և զթերութիւն:

Քանզի և բազումս գտանես կարաւտ այսմ տրից և քաղցեալս, միայն զի ի տալն Աստուած փառաւորեսցի, պարգևաւղ շնորՀաց և մի մեք. քանզի մեք ոչ ստացաք զնոյն, այլ իբրև ի պատգամաւորաց միտս արկ Աստուած զբանն, որպէս զի որք նուաճեսցին բանիւն թագաւորին որ առաքեաց, և մի մեզ լիցին փառաւորիչք. ապա թէ զնորայն պատիւ ի մեզ բերեմք և նորա շնորՀաւքն պերճանամք, յայտ է թէ Հակառակամարտս ամբառնամք Տեառն:

TEXTE 198

[1] Cf. *1P* 4, 10.
[2] Cf. *1P* 4, 11.

196

(Pierre dit) que *la miséricorde couvre les péchés*[1], comme Daniel le disait à Nabuchodonosor: «*Tu expieras tes péchés par la miséricorde, et tes iniquités, par la compassion envers les pauvres*[2].»

197

De Cyrille.

